կազմակերպելու համար։ Դասախոսական աշխատանքի են հրավիրվել արտադրության լավագույն աշխատողներ (Զերժինսկու անվան գործարանի դիրեկտոր ընկ. Մնացականյանը, Լենինի անվան Էլեկտրամեքենաշինական գործարանի գլխավոր էներգետիկ ընկ. Առաքելյանը, Ճշգրիտ չափիչ գործիքների գործարանի դիրեկտոր ընկ. Ավագյանը և ուրիշներ), վաստակավոր ուսուցիչներ (ընկ. ընկ. Ա. Պլուզյան, Վ. Բաբախանյան) և այլ ուժեր։ Կազմակերպված են բոլորովին նոր ամբիոններ (ընդհանուր տեխնիկական գիտության, էլեմենտար մաթեմատիկայի, երգեհրաժշտության) և կահավորված են նոր կաբինետներն ու լաբորատորիաները։ Միաժամանակ նախապատրաստված է 1961 թվականից բացել ուսուցիչների վերատրակավորման ֆակուլտետ՝ վեցամսյա և մեկ տարվա տևողությամբ։

Այսպիսով, Աբովյանի անվան ինստիտուտը առաջիկա տարիներում դառնալու է մանկավարժական մի հսկա կոմբինատ իր բազմաթիվ ֆակուլտետներով, բաժիններով, տարեկան շուրջ 700 ուսանողների ընդունելության պլանով։

Ինստիտուտի կոլեկտիվը, դասախոսական կազմը, մոբիլիզացնելով իր ողջ ուժերը, աշխատում է պատվով կատարել իր առաջ դրված խնդիրները և ոչ մի ջանք չի խնայում կոմունիզմի դարաշրջանի գպրոցներին արժանի, բազմակողմանի զարգացած կադրեր պատրաստելու համար։

Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ

Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտի դիրեկտոր։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը հիմնադրվել է ավելի քան քառորդ դար առաջ, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի (Արմֆանի) հիմնադրման հետ գրեթե միաժամանակ, 1934 թվականին։

Անցած ժամանակաշրջանում ինստիտուտը կատարել է մեծ աշխատանք։ Աչքի առաջ ունենալով ինստիտուտի անցյալ գործունեությունը, ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ սովետահայ պատմագրության վերջին երկու ու կես տասնամյակների նվաճումները անխզելիորեն կապված են ինստիտուտի անվան հետ։ Ինստիտուտում աշխատել ու աշխատում են ականավոր գիտնականներ, որոնց ստեղծած աշխատությունները աչքի ընկնող ավանդ են գիտության գանձարանում։

Անդրադառնալով ինստիտուտի պատմությանը, հիշենք, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի այժմյան հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտներն ու սեկտորների մեծ մասը, որպես սեկտորներ ու խմբեր, մտնում էին Պատմության ինստիտուտի կազմի մեջ։ Վերջին 15 տարիների ընթացքում, այն բանից հետո, երբ հիմնվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, նրանցից շատերը անջատվեցին, դառնալով գիտա-հետազոտական ինքնուրույն հիմնարկներ։ Վերջին անգամ 1958 թվականին ինստիտուտի կազմից դուրս եկավ և որպես ինքնուրույն գիտական հաստատություն սկսեց գործել Արևելագիտության սեկտորը, որը ՍՄԿՊ 20-րդ և 21-րդ համագումարների պատմական որոշումների լույսի տակ լուրջ աշխատանք է կատարելու մեր հարևան արևելյան ժողովուրդների պատմությունն ու կուլտուրան ուսումնասիրելու գործում, իսկ 1959 թվականի վերջերին ինստիտուտից անջատված հնագիտության սեկտորն ու ազգագրության խումբը դարձան ինքնուրույն հիմնարկ՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ։

Այժմ Պատմության ինստիտուտը, վերը նշած բաժանումներից հետո, իր մեջ միավորում է Սովետական Հայաստանի պատմության, Հայ ժողովրդի նոր, հին և միջին դարերի, ՍՍՌՄ և ժողովրդական դեմոկրատիայի երկրների պատմության սեկտորները։ Ներկայումս ինստիտուտն ունի շատ ավելի որոշակի պրոֆիլ, քան երբևէ և համալրված է կարող ու գործիմաց կադրերով։ Նրանցից շատերը որպես գիտնականներ ճանաչում են դուրս ռեսպուբլիկայի սահմաններից դուրս։

Ինստիտուտի նվաճումներն ամենից առաջ պետք է վերագրել այն հոգատարությանը, որ Կոմունիստական պարտիան ու Սովետական կառավարությունը ցույց են տալիս գիտության զարգացմանը։ Կոմունիստական պարտիայի գաղափարական օգնության շնորհիվ, ինստիտուտի գիտական կոլեկտիվը լուսաբանել ու լուսաբանում է հայ ժողովրդի պատմության շատ կենսական հարցերը։

Սովետական պատմագիտության ֆրոնտին Կոմունիստական պարտիայի բազմաբովանդակ օգնության մեջ բացառիկ նշանակություն ունեն պատմագիտության նոր կադրեր ստեղծելու, աճեցնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները, որոնց շնորհիվ ինստիտուտն այժմ ունի Սովետական իշխանության տարիներին աճած պատմագետների ստեղծագործական մի կոլեկտիվ, որը մեծ մասշտաբի խնդիրներ լուծելու լայն հնարավորություններ ունի։ Ավելորդ չի լինի նշել, որ ինստիտուտի գիտական կոլեկտիվի անդամները կարող են գործ ունենալ 22 կենդանի և մեռած լեզուների հետ, մի հանգամանք, որը մեծ առավելություն է և դյուրացնում է բազմալեզու աղբյուրները օգտագործելու աշխատանքը։

Չնայած տակ ունենալով Սովետական պետության կողմից պատմագիտության զարգացման համար տրված հսկայական նյութական միջոցները, Պատմության ինստիտուտը խիզախել է հայ ժողովրդի պատմության բազմահատորյակը ստեղծելու գործին։ Բազմահատորյակը բաղկացած է լինելու յոթ հատորներից։ Արդեն ավարտված է շատ ժամանակ ու ջանքեր պահանջող յոթհատորյակի ուղեցույց ծրագրի ընդարձակ շարադրանքը, որը մոտ ժամանակներս կապագրվի ու կհանձնվի ոչ միայն մեր ռեսպուբլիկայի և միութենական եղբայրական ռեսպուբլիկաների, այլև արտասահմանում ապրող հայագետների լայն քննարկմանը։

Բազմահատորյակի առաջին երեք հատորներում լուսաբանվելու է հայ ժողովրդի հին և միջին դարերի պատմությունը, հաջորդ երկու հատորներում՝ նոր շրջանի պատմությունը, իսկ վերջին երկու հատորները նվիրված են լինելու Սովետական Հայաստանի պատմությանը։

Ռեսպուբլիկայի գիտնականներից բացի բազմահատորյակն ստեղծելու աշխատանքին մասնակցելու են և ռեսպուբլիկայից դուրս գտնվող ուժերը։

Հիմնական խնդրի՝ հայ ժողովրդի պատմության բազմահատորյակն ստեղծելու աշխատանքին զուգընթաց, ինստիտուտի գիտական աշխատողների մի մեծ կոլեկտիվ (հին և միջին դարերի պատմության սեկտորը) առաջիկա տարիներին ավարտելու է Հայաստանի պատմական ատլասը կազմելու աշխատանքը։ Ատլասը գիտական տվյալներով կազմված քարտեզներով ցույց է տալու հայ ժողովրդի ծագման ու զարգացման հիմնական մոմենտները՝ սկսած հնագույն շրջաններից մինչև մեր օրերը։

Բազմահատորյակը պատվով գլուխ բերելու նպատակին են ուղղված ինստիտուտի միջոցառումների մեծ մասը։ Քանի որ բազմահատորյակը տալու է ոչ թե Հայաստանի, այլ հայ ժողովրդի պատմությունը, ուստի և ինստիտուտի գիտական կոլեկտիվը կանգնած կլինի հայկական գաղութների պատմությունը լուսաբանելու անհրաժեշտության առաջ։ Հայ գաղութների ստեղծումը Ռուսաստանում, Ուկրաինայում, Լեհաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Հունգարիայում, Միջին Ասիայի և Արաբական երկրներում, Հնդկաստանում, Հաբեշստանում և այլուր ցույց է տալիս, թե ինչպես հայրենիքից հարկադրանքով գաղթած հայերը ապաստան են գտել բազմաթիվ երկրներում և հյուրընկալության արժանանալով, իրենց հերթին նպաստել են տվյալ երկրի ժողովրդի հոգևոր ու նյութական կյանքի զարգացման գործին։ Հարցի մյուս կողմն այն է, որ տարբեր երկրներում ապաստան գտած հայերը ստեղծելով իրենց գաղութները, շարունակ կապված են եղել մայր երկրի հետ և այդ կապերով հայրենիքում ապրող ժողովրդին հաղորդակից են դարձրել հեռավոր ազգերի կյանքին ու կուլտուրային։

Հայ գաղութների պատմության լուսաբանումը, անշուշտ, դժվար գործ է, որի իրականացման համար ինստիտուտը արդեն կապերի մեջ է մտել Լեհաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունգարիայի գիտնականների հետ։ Չենք խոսում արդեն այն մասին, որ այժմ պրոգիցիա են դարձել հայ-ռուս, հայ-ուկրաինական, հայ-վրացական, հայ-ադրբեջանական գիտական փոխադարձ օգնությունն ու կապը։ Ըստ երևույթին բազմահատորյակի հրատարակությունը սերտ կապերի մեջ կգնի նաև հայ և ուզբեկ պատմաբաններին՝ Տաշքենտի, Սամարղանդի և Միջին Ասիայի այլ հայկական գաղութների պատմությունը լուսաբանելու համար։

Բազմահատորյակի մեջ իր լուսաբանումը կգտնի Հայաստանում իրենց զինվորական ծառայությունը կատարող, ռուսական ռևոլյուցիոն սերունդներին պատկանող զինվորների գործունեությունը, որը քիչ է ուսումնասիրված։ Իսկապես, եթե վերջերս մեզանում հաջողված փորձեր են կատարվել դեկաբրիստների գործունեությունը Հայաստանում վեր հանելու ուղղությամբ, ապա նույնը չի կարելի ասել Հայաստանում զինվորական ծառայություն կատարող ռևոլյուցիոն ռազնոչինցիների, մանավանդ սոցիալ-դեմոկրատ զինվորականների գործունեության մասին։ Առաջինները Հայաստան են բերել Գերցենի կոչերն ու ռևոլյուցիոն գրականությունը, այդ թվում և Չերնիշևսկու աշակերտ Ֆլորևսկու «Բանվոր դասակարգի դրությունը Ռուսաստանում» հռչակավոր աշխատությունը, որին բարձր գնահատական են տվել Մարքսն ու

էնգելսը։ Ինչ վերաբերում է սոցիալ-դեմոկրատ գինվորականներին, ապա նրանք հանդես են եկել կազմակերպություններով և իրենց մարտական ելույթներով առանձին եռանդ ու թափ են հաղորդել Հայաստանի բանվորների ու ռևոլյուցիոն գյուղացիների պայքարին։

Սովետական Հայաստանի պատմությունը լուսաբանելուն զուգընթաց, ինստիտուտի Սովետական հասարակության պատմության սեկտորի առաջ դրվում են լուրջ խնդիրներ, որոնց լուծման համար սեկտորն այժմյանից իսկ ձեռնարկել է մի շարք պրոբլեմների շուրջը մենագրություններ ստեղծելու և փաստական նյութերի ժողովածուներ հրատարակելու գործին։ Այսպես, պատրաստվել և առաջիկայում հրատարակության են հանձնվելու Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի, ինտելիգենցիայի, կուլտուրական ռևոլյուցիայի պատմության և այլ հարցերին նվիրված մենագրություններ։ Այս մենագրությունները և Սովետական Հայաստանի առանձին գործարանների պատմության մասին մինչև այժմ հրատարակված և առաջիկայում հրատարակվելիք աշխատությունները մեծապես կնպաստեն Սովետական հասարակության պատմության սեկտորի առաջ ծառացած դժվարությունները հաղթահարելու գործին։ Հիշենք, որ այս տեսակետից մեծ կլինի և ինստիտուտին կից Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի կարիքների պատրաստած և պատրաստելիք ժողովածուների ընձեռած օգնությունը։ Առաջիկա տասը տարում «Սոցիալիստական քաղաքներ» սերիայով լույս են տեսնելու Սովետական Հայաստանի քաղաքների պատմությանը նվիրված աշխատություններ։ Ինստիտուտի նոր պատմության սեկտորը, բազմահատորյակի աշխատանքին ձեռնարկելու հետ մեկտեղ, շարունակելու է Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը, բանվոր դասակարգի ձևավորմանն ու զարգացմանը, ազգային-ազատագրական շարժումներին վերաբերող հարցերը լուսաբանելու և նոր մենագրություններ տալու աշխատանքը։ Նախատեսվում է 1960—1962 թթ. Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտների հետ միասին հրատարակել Անդրկովկասը Ռուսաստանի հետ միանալու պատմությանը նվիրված փաստաթղթերի ժողովածու 3 հատորով։ Առաջիկա տարիներին հրատարակվելու է նաև հայ հասարակական մտքի, առանձնապես հայ պատմագիտական մտքի զարգացման պատմությունը լուսաբանելու աշխատանքը։

Ինստիտուտի առաջնահերթ խնդիրներից է նաև հայ գյուղացիության պատմությունը լուսաբանելու հարցը։ Այս ուղղությամբ կատարվել են աչքի ընկնող աշխատանքներ, բայց հայ գյուղացիության պատմությունը, զուգորդված ագրարային հարաբերությունների հետ, դեռ շատ մութ կողմեր ունի, որոնց լուսաբանումը վաղուց դարձել է անհրաժեշտություն։ Ինստիտուտի հին և միջին դարերի պատմության սեկտորը, ինչպես և մյուս սեկտորները, առաջիկա մի քանի տարիների ընթացքում կտան նոր մենագրություններ՝ հայ գյուղացիության պատմության այն շրջանների վերաբերյալ, որոնք տակավին չեն ուսումնասիրված կամ թերի են ուսումնասիրված։ Սեկտորի աչքի ընկնող գործը, որ արժեքավոր ավանդ կլինի հայագիտության գանձարանում, դա նրա կազմած «Հայ Կանոնագիրք» ժողովածուն է։ Այդ ժողովածուն, որ լույս կտեսնի առաջիկայում, լինելու է իր տեսակի մեջ առաջինը և զգալի օգնություն կլինի հայ իրավագիտության պատմությունը հետազոտողներին։

ՍՍՌՄ և ժողովրդական դեմոկրատիայի երկրների պատմության սեկտորը, որ անհամեմատ նոր է և համալրվում է երիտասարդ կադրերով, մի շարք մենագրությունների հետ միաժամանակ հրատարակելու է արժեքավոր փաստաթղթերի ժողովածուներ, որոնց կազմելու մեջ կներգրավվեն ոչ միայն ՍՍՌՄ-ի, այլև Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Բուլգարիայի, Հունգարիայի, Ալբանիայի, Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի գիտա-հետազոտական հիմնարկները։

Ա. Գ.

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1959 ԹՎԱԿԱՆԻՆ

Հայաստանը հին մշակույթի երկիր է և վերին աստիճանի հարուստ հնագիտական հուշարձաններով։ Հայաստանում կատարվող պեղումները բնականաբար նպատակ ունեն երևան բերելու և ուսումնասիրելու մեր նախնիների տարբեր դարաշրջաններում ստեղծած նյութական մշակույթը։

Նախորդ տարիների նման 1959 թ. նույնպես պեղումները կատարվել են մի շարք հնավայրերում և նրանց արդյունքներին համառոտակի կանդրադառնանք հուշարձանների ժամանակագրական հաջորդականությամբ։